ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ա. Պ. ՍԻՆԵՅԻՆ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԽՐԱՏՆԵՐ

ԲԵՐԱՆԻ ԽՈՒՌՉԻ ԵՒ ԱՏԱՄՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱ-
ՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԽՕԼԵՐԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Թիֆլիզի քաղաքային բուժարանի ատամնաբոյժ

Հ. Յ. ՕՐԲԵԼԻ

ԹԻՖԼԻԶ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ
Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., домъ № 41.
1892

Дозвол. ценз. Тифлисъ, 25 сентября 1892 года.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Մեզանից իւրաքանչիւրին յայտնի է, որ ատամնացաւ ասուած տկարութիւնը միշտ եղած է ամեն տեղ. բայց մասաւորապէս մինչեւ դարուս կէսը՝ մեր տեղական ժողովուրդը երջանիկ էր զգում իրան այդ ցաւի կողմից, որովհետեւ ատամնացաւը չունէր այն համաճարակ բնաւորութիւնը մեզանում, որպիսին ունէր եւ ունի օտար երկրներում. Մերմաւորապէս դարուս վերջին կիսից այդ տկարութիւնն սկսեց դարձնել իւր վրայ բ ժ շ կ ա կ ա ն ուշադրութիւն, որովհետեւ ատամնացաւն այդ ժամանակուանից դէսն սկսեց ընդհանրանալ մեր ժողովրդի մէջ. մանաւանդ որ ատամների լաւ եւ վատ պահպանութիւնը մեծ ազդեցութիւն ունի մարդուս առողջութեան վրայ, իսկ խօլերայի ժամանակ՝ եւս առաւել.

Ուստի ես պարտք զգացի, որքան ինձ ներեցին հանգամանքները, ծանօթացնել ընթերցող հասարակութեանը ատամնացաւն առաջացնող եւ առողջացնող բոլոր պատճառների եւ միջոցների; ինչպէս եւ այդ հիւանդութեան վատ եւ վնասակար ազդեցութեան հետ. Իմ անձեռնհասութիւնն ստիպեց ինձ գրաւոր դիմել Պ. Սինիցին ատամնաբոյժին, որ Պետերբուրգում լոյս տեսնող եւ ամբողջ Ռուսիայի մէջ միակ «Ատամնաբուժական թերթի» հրատարակիչն է. Պ. բժիշկը խընդիրս յարգելով՝ իւր հետեւեալ գրութեամբ լիակատար իրաւունք է տալիս ինձ՝ թարգմանել իւր երկասիրութիւնը հայերէն լեզուով.

Многоуважаемый товарищъ!

Искренно радуюсь Вашему доброму начинанію перевести на армянскій языкъ изданную мною брошюру „Объ особенной важности ухода за полостью рта и зу-

бами въ холерное время". Съ удовольствіемъ даю Вамъ на это полное право и отъ души желаю возможно большаго распространенія этого перевода.

Съ истиннымъ уваженіемъ А. П. Синицынъ.

10 Августа 1892 года.
С. П. Б.

Թարգմանական Թերութիւններիս մասին խնդրում եմ ընթերցողների ներողամտութիւնը, մանաւանդ որ սա առաջին փորձն է նոր սկսածս ասպարիզի վրայ։ Եւ թէեւ, արդէն ընդհանրացած կարծիքով, խոլերան գրեթէ վերջացած է կարծւում եւ գուցէ աւելորդ համարուէր իմ այս գրքոյկի այժմ հրատարակելը, իբրեւ ուշացած եւ անժամանակ մի աշխատութիւն, սակայն պարտք եմ համարում յայտնել, նախ՝ որ ուշանալն ինձանից միանգամայն անկախ պատճառներով է եղած, երկրորդ՝ թէեւ գրքոյկս մի կողմից վերաբերում է առաւել խոլերայի ժամանակ բերանի խոռոչի եւ ատամների խնամատարութեան կարեւորութեանը, սակայն միւս կողմից այս գրքոյկն առհասարակ պիտի ծառայէ իբրեւ ուղեցոյց բերանի եւ ատամների հոգացողութեան համար։ Չեմ ասում եւ բնաւ ցանկալի էլ չէ ասելը, որ խոլերան, հակառակ մեր ակնկալութեանը, կարող է կրկնուել, եթէ ոչ մեր երկրում, գուցէ մի այլ հայաբնակ տեղ, ուր գրքոյկս կարող է իւր ծառայութիւնը մատուցանել։

Իմ մխիթարութիւնը պիտի կայանայ գէթ նրանում՝ որ ընթերցողը ջանայ օգտուել այս գրքոյկից, որքան ձեռնհաս է, պահպանելու համար իւր առողջութիւնը, որով եւ ես հասած կը լինիմ իմ ցանկալի նպատակին։

Թիֆլիզի քաղաքային բուժարանի ատամնաբոյժ՝

Հ. Յ. ՕՐԲԵԼԻ

ԲԵՐԱՆԻ ԽՈՌՈՉԻ ԵՒ ԱՏԱՄՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԽՕԼԵՐԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

«Մարդս խելացի էակ է»։

Մարդուս, որպէս եւ շատ ուրիշ կենդանիների, մարմնի բազմատեսակ գործարանների կազմակերպութիւնը խիստ նշանաւոր է, ի միջի այլոց, եւ այն տեսակէտից որ՝ 1) միւնոյն գործարանը, իւր կազմակերպութեան մէջ մտնող զանազան նպաստող միջոցների օգնութեամբ՝ պէս-պէս ծառայութիւններ ու պաշտօններ է կատարում, եւ 2) փոխադարձաբար էական եւ սերտ կապ ունի միւնոյն մարմնի միւս գործարանների հետ, որից եւ առաջ է գալիս կենդանի էակի ներդաշնակ եւ զանազանակերպ գործունէութիւնը։ Այսպէս օրինակ, մարդուս բերանը, որ փոխուած մասերով (այտերով, շրթունքներով եւ այլն) ու ոսկրներով՝ մի չափաւոր խոռոչ է ներկայացնում, իւր մէջ եղած նպաստող միջոցների (լեզուի, ատամների, լորձաթաղանթի, ընդերքի եւ այլն) օգնութեամբ մարդու կեանքի մէջ տեսակ տեսակ պաշտօններ է կատարում. նա ծառայում է և՛ մարսողութեան (կերակուրն ընդունել, մանրացնել, թքով փափկացնել եւ մարսողութեան ճանապարհով անցկացնել), և՛ շնչառութեան, և՛ խօսելուն, և՛ երգելուն, և՛ օրգանիզմից կողմնակի հիւանդոտ նիւթերի արտաթորմանը, եւ ուրիշ. շատ նպատակների։ Բերանը, իւր այսպիսի բարդ ծառայութիւններով, սերտ եւ էական յարաբերութիւններ ու-

նի մարմնի շատ ուրիշ գործարանների հետ. այնպէս որ նրա՝ այսինքն բերանի շ— հ մ վ—, ա—ողջ հ մ հ—ա—ռ լինելն անդրադառնում է և միւս համապատասխանող գործարանների դրութեան վրայ։ Եւ ընդհակառակն. եթէ բերանն առողջ է և կանոնաւոր է գործում, դա կը նշանակի որ մարսողութեան կանոնաւորութիւնը նշանաւոր կերպով ապահովուած է և որ շընչառութեան գործարանները՝ բերանի խոռոչի կողմից, անվտանգ դրութեան մէջ են գտնւում։ Իսկ եթէ ստամոքսն է տկար, այդ ժամանակ՝ շատ յաճախ ստամոքսի այդ տկար դրութիւնն անդրադառնում է բերանի դրութեան վրայ, կամ ուրիշ խօսքերով՝ հ—ա—ռ ե ա—ողջ բերանն ո— ստամոքսը ինքնուրոյն վրայ փոխադարձ ազդեցութիւն ունին, նայելով երանց հ—ա—ռ հ մ ա—ողջ վիճակին։

«Առողջ բերան» ասացուածքը նշանակում է թէ՝ բերանի բոլոր մասերը քիչ թէ շատ կանոնաւոր կազմակերպութիւն ունին, և թէ առողջ բերան ունեցողը կարող է սովորական կերակուրն անարգել ընդունել և կարգին ծամել, այսինքն՝ մանրացնել ու թքով փափկացնել և այդ ձև պատրաստած կերակուրը կանոնաւոր ճանապարհով առաջ մղել դէպի որկորը (զանց ենք առնում խօսել այստեղ առողջ բերանի ուրիշ պաշտօնների կամ ֆունկցիաների մասին)։

Բայց ամենքին յայտնի է, որ առողջ բերան ունենալը, տարաբախտաբար, շատ հազուագիւտ բան է։ Սովորական երևոյթն այժմ այն է, որ բերանը կամ անկանոն է կամ հիւանդ։ Եւ այդ ինչից. նրա համար որ կամ ատամներն են վնասուած մի առանձին նեխուած բանով (այսպէս ասած կերցաւային փտումն—каріозное разрушеніе), կամ ատամների արմատների ծածկը անկանոն դրութեան մէջ է, գրգռուած է և խրոնիկական

կամ սուր կերպով բորբոքուած, կամ լնդերքն են գտանւում բորբոքման վիճակի մէջ, որ ասել է թէ՝ փափկել և արենաթոր են դարձել, կամ նշկազեղձերն (миндалевидныя железы) են բորբոքուած, խրոնիկական կերպով մեծացած, գերաննդութեան հասած (гипертрофированы), կամ ատամներն են ծածկուած ատամնաքարի հաստ թէ բարակ շերտով, կամ ատամի խիւսն է (пульпа) բացուած, բորբոքուած, մեռած և այլն։

Այդպիսի անկանոն և հիւանդ բերան ունեցողը՝ անպատճառ նեղութիւն է քաշում այս կամ այն կողմից. կամ կուլ տալիս է ցաւ զգում, կամ տաք և սառն ուտելիքն ու խմելիքը չէ տանում, կամ բոլորովին անկարող է լինում կերակուր ընդունել, կամ գիշերներն ու ցերեկներն է անգործ անցկացնում՝ ոչ ուտում է, ոչ խըմում, սարսափելի ատամացաւի պատճառով, կամ թէ չէ ստիպուած է բժշկական օգնութեան դիմելու՝ ատամնային թարախակոյտի պատճառով, որ պատռում է ոչ միայն լնդերքը, այլ երբեմն մինչև անգամ և թուշը. կամ նա իւր բերանի գարշահոտութեամբ զզուանք է պատճառում շրջապատողներին և ինքն իրան՝ ներշնչելով իւր բերանի գարշահոտութիւնը կամ կուլ տալով իր գարշահոտ բերանի հոտած և փտած արտադրութիւնը։

Շատ բազմատեսակ է անկանոն և հիւանդ բերանի ներգործութիւնը մարդուս ընդհանուր առողջութեան վրայ։ Անկանոն և հիւանդ բերանը կարող է չզայրին ծանր ցաւեր պատճառել մարդուն և հասցնել նրան յուսահատութեան։ Ատամնային թարախակոյտի զարգացումը կարող է այլանդակել մարդուն, շարունակ տկարութիւն առաջ բերել և մինչև անգամ մահ պատճառել, վարակելով արիւնը և կամ նեխած բորբոքումը հասցնելով ուղեղային թաղանթներին։

Երբ բերանն անկանոն է և հիւանդ, այդ դէպքում կանոնաւոր ծամելու անկարելիութիւնը պատճառում է մարսողութեան խանգարումն, ստամոքսի բորբոքումն կամ ստամոքսադում (катарръ желудка), առաջ է բերում սակաւարիւնութիւն, մռայլ և յուսահատ տրամադրութիւն և մինչև անգամ կարճացնում է մարդուս կեանքը: Մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել անկանոն և հիւանդ բերանի վրայ, որի համար պատասխանատու են հասակաւորները՝ իրանց անձի վերաբերմամբ, ծնողները կամ խնամակալները՝ որդոց վերաբերմամբ, բժիշկներն ու հոգատարները՝ ծանր հիւանդների վերաբերմամբ:

Կանոնաւոր և առողջ բերանը երջանիկ կենցաղավարութեան աղբիւրներից մէկն է և նպաստում է երկարակեցութեան:

Եթէ ներուէր մեզ մի կոպիտ համեմատութիւն անելու, այն ժամանակ բերանը մենք կը նմանեցնէինք մի մեծ տան հանդիսաւոր մուտքի: Հասկանալի է որ հանդիսաւոր մուտքը խիստ մաքուր և կանոնաւոր պիտի պահել: Այդ յայտնի է մեզանից իւրաքանչիւրին: Հանդիսաւոր մուտքը կարգին պահելու համար հարկաւոր է ունենալ խելքը գլխին և արթուն մի սպասաւոր: Մարդուս բերանը, որ բազմատեսակ ծառայութիւններ է մատուցանում, չէ կարող ինքն իրան՝ միշտ և՛ կանոնաւոր լինել և՛ առողջ: Բերանի կատարած պաշտօնն այնպիսի պաշտօն է, որ նա անպատճառ աղտոտւում է և փչանում, հետևապէս կարող է և՛ հիւանդանալ, և այդպիսով պատճառ լինել վերոյիշեալ անհաճոյ, վնասակար և մինչև անգամ վտանգաւոր հետևանքների: Հասկանալի է ուրեմն որ բերանն էլ, որպէս և տան հանդիսաւոր մուտքը, կարօտ է խելացի և արթուն սպասաւորի: Բերանի

այդ տեսակ սպասաւորը՝ առողջապահութեան կանոնների հետ ծանօթ լինելն է, այսինքն՝ գիտենալ և բարեխղճաբար միշտ գործադրել այդ կանոնները բերանի խոռոչի և ատամների խնամատարութեան վերաբերմամբ՝ թէ առողջ և թէ տկար դրութեան մէջ եղած ժամանակ:

Որպէսզի բերանը կանոնաւոր կերպով կատարէ իւր պաշտօնը, պէտք է՝ 1) հոգալ նորա անպայման մաքրութեան մասին, 2) չզրդռել նրան և չփչացնել զանազան, արդէն յայտնի ու վնասակար ճանաչուած կերակրեղէններով, քաղցրեղէններով, խմիչքներով և այլն: Բերանը մաքուր պահելու համար՝ բաւական է ամեն օր թէ առաւօտները, թէ ամեն անգամ ուտելուց յետոյ, և թէ անպատճառ քնից առաջ՝ գործ դնել «մեատնի ջուր», ատամի վրձին, ատամի սապոն և երբեմնապէս էլ մաքրած կաւիճի փոշի:

Անկանոն և հիւանդ բերանն ամենից առաջ պահանջում է ատամնաբուժական օգնութիւն, որպէսզի կանոնաւոր և առողջ վիճակի հասցնի: Ատամնաբոյժը կը հեռացնի բերանից փտած արմատները և ատամնաքարերի աղտոտ շերտերը, կ'ազատի ատամնացաւից, կապարով կը լցնի փչացած ատամների փոսերը, այնպէս որ նրանք դարձեալ պիտանի կը դառնան, կը բժշկի ատամնային թարախակոյտը, չի թոյլ տայ, որ նեխած հեղուկ հաւաքուի այնտեղ, որտեղ հարկաւոր չէ, արհեստական ատամներ կը դնի, և այդպիսով միջոց կը տայ մարդուս կանոնաւոր կերպով սննդուելու: Այսպէս ահա, երբ բերանը կանոնաւորւում է և առողջանում, այն ժամանակ մարդ պարտական է այդ վերանորոգուած բերանի վրայ մշտական հոգացողութիւն և հսկողութիւն ունենալ, ի հարկէ աւելի մեծ խնամքով և զգուշու-

թեամբ՝ իբրև կարկատած կամ վերանորոգուած բերանի տեր։

Եւ որովհետև, վերոյիշեալ համեմատութեան նայելով, բերանը ներկայացնում է մի հանդիսաւոր մուտք դէպի մարդկային մարմնի ներքին և կարևոր գործարանները, հասկանալի է որ չնայած այդ մուտքի հանդիսաւոր լինելուն, նրա մէջ կարող են թափանցել, կամայ թէ ակամայ, ամեն տեսակ նիւթեր, ինչպէս օրինակ՝ աղտոտ, փնասակար կերակուր, ըմպելիք, փոշիախառն, գործարանական ու հանքային շատ անմաքրութիւններով վարակուած օդ, նոյն իսկ տիրոջ և կամ ուրիշի երբեմն բաւական աղտոտ և անմաքուր մատները, որպէս և ուրիշ, կասկածելի մաքրութիւն ունեցող շատ առարկաներ։ Բացի դրանից, հենց նոյն իսկ բերանի մէջ, երբ հոգս չենտանում նրա մաքրութեան վրայ՝ առաջ են գալիս այնպիսի հանգամանքներ, որոնք գոյացնում են այնտեղ, այսինքն բերանի մէջ, աղտոտութիւններ, նեխուածք, փտած կամ հոտած բաղադրութիւններ և պէս-պէս թթուումներ։

Եթէ ճաշից յետոյ և քնից առաջ խնամքով չմաքրուի բերանը՝ այդ դէպքում ատամների միջանցքներում մնացած կերակուրի կտորներն ու մնացորդները, որոնք խառնուած են թուքի, մաղասի և լորձաթաղանթից պոկուած արտաքին շերտի հետ, անպատճառ նեխում և թթուում են կամ իրանք իրանց և կամ մանրադիտական սունկերի (микроскопическіе грибки) ազդեցութեան տակ, որոնք շատ դիւրութեամբ մտնում են մարդուս բերանը՝ օդի, կերակուրի և կամ մի որևէ պատճառով նոյն բերանը ընկնող շատ տեսակ աղտոտ ու անմաքուր առարկաների հետ։

Այդ մանրադիտական սունկերը (բակտերիաներ, բացիլներ, միկրոկոկներ, միկրոբներ, պնեյմոկոկներ, ստրեպտոկոկներ, ստաֆիլոկոկներ և այլն (բայց կարիք էլ չկայ որ ժողովուրդը այս դէպքում շատ մտիկ ծանօթութիւն ունենայ այդ միլիոնաւոր աստիճանների ու տիպերների հետ) իրանց նշանակութեամբ շատ բաղմատեսակ են մարդկային օրգանիզմի վերաբերմամբ։ Այդ մանրադիտական սունկերից ոմանք համարւում են անվնասակար, եթէ մինչև անգամ նրանք երկար ժամանակ ձրիաբար ապրեն մեր բերանի մէջ. միւսները—պաթոգենք, այսինքն՝ կամ բերանի խոռոչը մտնելուց անմիջապէս յետոյ և կամ մի քանի ժամանակ անցնելուց յետոյ նրանք առաջացնում են մի որևիցէ հիւանդութիւն։

Այդ վնասակար և ախտաբեր մանրադիտական միկրոպարազիտներից ոմանք տեղական, այսինքն բերանի հիւանդութիւն են առաջ բերում և կամ նպաստում են տեղական տկարութեան զարգացմանը (օրինակ ատամների կերցաւային աւերում, ատամնային թարախակոյտ, ընդերքի նեխումն կամ փտումն, նեխած բորբոքումն լորձակալի և այլն), ոմանք տեղական հիւանդութիւն առաջացնելով՝ զանազան ճանապարհներով թափանցում են մարմնի քիչ թէ շատ հեռաւոր մասերը, ուր և առաջացնում են նոր, դոյն օրինակ տկարութիւններ, և վերջապէս ոմանք էլ վարակում են հենց ամբողջ մարմինը՝ կամ ուղղակի արեան մէջ թափանցելով և կամ իրանց արտադրութիւններով թունաւորելով արիւնը։ Յայտնի է և քիչ թէ շատ ապացուցուած, որ բերանի խոռոչը դիւրութեամբ են մտնում այն վարակիչ միկրոպարազիտները, որոնք առաջացնում են ատամների կերցաւային աւերումն, ատամի խիւսի բորբոքումն, ատամնային թարախակոյտ, ծնոտի ոսկրների, ոսկրների ուղեղի և ոսկրամաշկի (надкостницы) բորբոքումն, արիւնի

թարախակալած վարակումն, ուղեղի և ուղեղային թաղանթի բորբոքումն, ատամնաբուների (зубныя луночки) թարախի հոսումն, մարսողութեան պէս-պէս խանգարմունք, թոքերի խոկատապ (крупозное воспаленіе легкихъ), նշնագեղձի բորբոքումն, Լուդովիկեան սոսորդատապ (Людвигова жаба), ակտինոմիկոզ (առանձին ուռոյցքներ, որոնք առաջանում են մի տեսակ սունկերի զարգանալուց), կաթնանկախտ (молочница), դիֆտերիա, գնդկախտ (бугорчатка), սիֆիլիս, և այլն և այլն:

Կարծում ենք որ մեր ասածները բաւական պիտի լինին, որպէսզի իւրաքանչիւր ոք, որ գնահատում է իւր անձի և իւր որդոց ու մերձաւորների առողջութիւնը, հասկանայ թէ որքան կարևոր է բերանի խոռոչը և ատամները մշտական կանոնաւորութեան մէջ պահպանելը:

Այսպէս ուրեմն, բացատրելով բերանի մշտական խնամատարութեան, հոգացողութեան էական նշանակութիւնը, որ մարդիկ ըստ սովորութեան, ծուլութեան, տգիտութեան և կամ անկարողութեան պատճառով անուշադրութեան են տալիս, մենք հնարաւոր ենք գտնում ցոյց տալու բերանի բարեխիղճ պահպանութեան և խնամատարութեան «անչին նշանակութիւնը» մանաւանդ խօլերայի ժամանակ, այսինքն՝ երբ որ սպառնում է խօլերայի երևրևան գալու վտանգը և երբ արդէն զարգացած է խօլերային համաճարակումը կամ էպիդեմիան:

Խօլերայի պատճառն է՝ պրոֆէսոր Կոխի գտած մանրադիտական բացիլը, որ մանրադիտակի միջոցով քննելով՝ ինչպէս յայտնի է, ստորակէտի ձև ունի և դրա համար էլ ասում է «ստորակէտաձև բացիլ»: Այդ վարակումն ընկնելով մարսողութեան խողովակը—աղիքների մէջ՝ շատ արագութեամբ բազմանում է, թունաւորում է արիւնը և առաջ է բերում այն սարսափելի հիւանդութիւնը, որ կոչւում է խօլերա: Խօլերայի վարակման վերաբերմամբ կարելի է դրականապէս ապացուցուած համարել՝

1) Վարակման թափանցումը աղիքային խողովակի մէջ և նրան վարակելը, որ գլխաւորապէս բերանի միջոցով է կատարւում:

2) Վարակումը կարող է մնալ բերանը ջրի (որի մէջ, մանաւանդ երբ դա կեղտոտ է, խօլերային վարակումը մինչև երեք ամիս պահպանում է իւր թունաւոր ներգործութիւնը), կաթի, կերակրեղէն զանազան նիւթերի, քաղցրեղէնների և ուրիշ նիւթերի հետ, որոնց վրայ պատահմամբ կարող էին ընկնել խօլերային փքսխուածքի և ուրիշ վիժմունքների մասնիկները, կամ որոնց վրայ կարող էին նստած լինել՝ արդէն խօլերայի փքսխուածքի կամ արտաթորութիւնների վրայ եղած ճանճեր, փողոցի և սենեակի խոնաւ փոշու հետ. խօլերային վարակումը մարդս կարող է վերջապէս պատուաստել իւր վրայ այն ժամանակ, երբ անզգուշութեամբ և չգիտենալով բերանը կը դնէ իւր աղտոտ մատները, այսինքն՝ այն մատները, որոնց վրայ ընկած կը լինի խօլերային վարակումը, օրինակ՝ հիւանդներին խնամելու և կամ խօլերոտ սպիտակեղէնների, շորերի հաւաքելու և լուանալու ժամանակ:

3) Երբ ստամոքսը կանոնաւոր է և բերանից ստամոքսն ընկնող խօլերային վարակման չափը սակաւ է և անշան, յայնդէպս վարակումը ինքնին ոչնչանում է՝ ստամոքսի թթուանիւթի ներգործութիւնից:

4) Բայց եթէ խօլերային վարակումը մեծ քանակութեամբ ընկնի ստամոքսի մէջ, օրինակ՝ ջրի կամ կաթի հետ, ստամոքսը կանոնաւոր դրութեան մէջ եղած ժամանակն անգամ, այդ վարակումն ամբողջովին չի ոչնչ-

չանում ստամոքսի թթուանիութիներգործութիւնից, այլ հնարաւորութիւն է գտնում թափանցելու աղիքային խողովակը, բազմապատկւում է այնտեղ և խոլերային հիւանդութիւն պատճառում։

5) Թէև այդ վարակման կարող է ենթարկուել երբեմն և առողջ ու ամուր կազմուածքի տէր մարդը, որի ստամոքսի աղիքային խողովակը կանոնաւոր է, և եթէ, օրինակ, նա ըմպելիքի կամ ուտելիքի հետ մեծ քանակութեամբ կուլ է տուել խոլերային վարակումը, այնուամենայնիւ թոյլ կը լինի ազդեցութիւնը. իսկ ընդհակառակն, զօրաւոր կը լինի նրանց համար՝ որոնք մի որևիցէ տկարութիւն ունին, օրինակ՝ սակաւարիւն են կամ ստամոքսադում և աղիքադում ունին (катарръ желудка и кишекъ), կամ այն մարդիկ, որոնք թուլակազմ, աշխատանքից կամ մոլութիւններից յոգնած և թուլացած են և այլն։

Սրանից դրականապէս հետևում է որ առաջին՝ խոլերայի երևան գալու վտանգը հասած ժամանակ իւրաքանչիւր ոք իրան կանոնաւոր պիտի պահէ. երկրորդ՝ խոլերայի երևան գալու դէպքում իւրաքանչիւր ոք ամենախիստ կերպով պիտի պահպանէ մաքուր կենցաղավարութեան, կերակուրին, ըմպելիքներին և ուտելու ձևին վերաբերեալ յայտնի կանոնները։

I. Որովհետև մարդուս մարսողութեան գործարանների, հետևապէս և մեռնդի, ընդհանուր առողջութեան, մարմնի ամրութեան և առոյգութեան կանոնաւոր լինելը մեծ կախում ունի բերանի խոռոչի և ատամների դրութիւնից, ուստի հասկանալի է որ՝ խոլերայի վտանգի դէպքում, անկանոն և հիւանդ բերան ունեցող իւրաքանչիւր ոք անպատճառ պիտի զբաղուի իւր բերանը կանոնաւորելու գործով։ Երբ ատամնաբոյժի օգնութեամբ

անկանոն բերանը առողջանում է, այն ժամանակ բերանի տէրը այլ ևս չէ տանջւում հիւանդոտ բերանի ֆիզիկական հետևանքներից. կարողանում է կերակուրը ծամել, ինչպէս հարկն է, չծանրաբեռնել ստամոքսը թաց, բայց լաւ չծամած պատառներով, վերականգնում է ստամոքսի կանոնաւոր գործունէութիւնը, աւելի առողջ և առոյգ է դառնում, և հետևապէս՝ սակաւ հակամէտ դէպի զանազան վարակումներ։ Երբեմն, երկու շաբաթ ժամանակամիջոցն անգամ բաւական է՝ բերանն ու ատամները կանոնաւոր դրութեան հասցնելուց յետոյ, որ մարդու առողջութեան մէջ էական փոփոխութիւն լինի դէպի լաւը։

Բերանն ու ատամները կանոնաւորութեան վերածելուց յետոյ՝ մարդս անպատճառ պարտաւոր է.

1) Անպայման մաքրութեան մէջ պահպանել բերանը, վերոյիշեալ միջոցների օգնութեամբ։

2) Նախամեծար համարել չոր (ի հարկէ ընտիր և անպատճառ մաքուր) կերակուրը, ծանր և խնամքով ծամել և չծանրաբեռնել ստամոքսը շատ ուտելով։

3) Աշխատել չլցնել ստամոքսը այնպիսի չծամուող, այլ ուղղակի կուլ տրուող կերակուրներով (որպիսի են՝ արգանակ—սուպ, մսաջուր—բուլիոն, կաթ և այլն) և խմիչքներով։

4) Ուտելուց և խմելուց առաջ միշտ լուանալ ձեռքերը, երեսը և ողողել բերանը։

5) Զսպել իրան կամ բոլորովին հրաժարուել սպիրտային կամ ոգելից խմիչքների գործածութիւնից։

6) Ծարաւը կոտրելու համար գործածել ոչ-ոգելից խմիչքներ (թէյ՝ կիտրոնով, սուրճ, լաւ եփ տուած ջուր, թթուաշ ջուր (подкисленная вода), անպայման ընտիր տեսակի և լաւ պատրաստած մի քանի հանքային ջրեր և այլն) միայն այն ժամանակ, երբ

յիրաւի ծարաւը նեղացնում է. խմել չափաւոր, կում-կում և ոչ թէ հեղուկի մեծ քանակութեամբ լցնել ստամքը, որ դրանից փքւում է, ծանրանում և առաջ բերում ստամոքսի զոդոց։

II. Խօլերայի ժամանակ, այսինքն՝ երբ այնտեղ, ուր դուք, ընթերցող, կենում էք, խօլերայով հիւանդանալու դէպքեր են պատահում, վերոյիշեալ բոլոր կանոնները պէտք է պահպանել աւելի մեծ խստութեամբ և բարեխղճաբար, բացի դրանից՝ հարկաւոր է ձեռք առնել և հետեւեալը.

7) Վերին աստիճանի մաքրութիւն պահպանել մարմնի, հագուստի, սպիտակեղէնների, սենեակի օդի, ուտելիքի, ըմպելիքի վերաբերմամբ, այլ և ուրիշ մարդկանց և առարկաների հետ յարաբերութիւն ունեցած ժամանակ։

8) Օրը մի քանի անգամ, մանաւանդ ուտելուց առաջ, ձեռքերն ու երեսը լուանալ եփ տուած ջրով, խառնելով նրա մէջ կէս տոկոս կարբոլեան թթու, ճաշից առաջ, ճաշից յետոյ և քնից առաջ մեծ խնամքով լուանալ բերանը և մաքրել ատամները թթու ողողաջրով։

9) Արհեստական ատամներ ունեցողը, պարտաւոր է հոգալ նրանց կանոնաւոր պահպանութեան մասին, որպէսզի այդ ատամները կարողանան կանոնաւոր ծառել. օրինակ՝ հարկաւոր է օրը մի քանի անգամ մաքուր մատներով հանել բերանից այդ ատամները և լուանալ եփ տուած և թթուաշ *) ջրով, կամ մի տոկոս կարբոլեան թթուտի խառնուրդով ատամի վրձինի օգնութեամբ։

10) Խօլերայի ժամանակ երեխաների մաքրութեան վրայ պարտաւոր են բարեխիղճ հսկողութիւն անել ծնողներն ու դաստիարակները (և ոչ թէ դայեակները կամ տան մէջ կեղտոտութիւն տարածող ծառաները)։ Երեխաները պէտք է մաքրեն իրանց ատամները և լուանան բերանը զոլ թէյով, խառնած թթու կիտրոնաջրի հետ։

Որովհետև թթուաջրերով բերան ողողելը, երբ նրանք կրկնւում են յաճախ և անչափաւոր կերպով, առհասարակ վնասել կարող են ատամներին, ուստի այդ միշտ պէտք է գործադրել միմիայն խօլերայի ժամանակ։

---

*) Քացախով 2—3 տոկոս քացախի թթուտի և կէս տոկոս կարբոլի խառնուրդը սպանում է խօլերային վարակումը։

Ծանօթ. Բերան ողողելու այդ տեսակ միջոցներից են.

№ 1. Անուշահոտ քացախ, հասարակ քացախ, հաւասար, 1—2 թէյի գդալով մի թաս ջրի հետ (ի հարկէ եփ տուած)։

№ 2. Կաղնիական թթուտ—дубильная кислота. . . . . 32 գրան։
Անանուխի ջուր—перечно-мятная вода. . $6^1/_2$ ունցիա։
Տարգալախոտի սպիրտ—спиртъ ложечной травы . . . . . $1^1/_2$ ունցիա
ողողումը։

№ 3. Կիտրոնահիւթ—лимонный сокъ. . . . 1 ունցիա։
Տարգալախոտի ջուր—воды ложечной травы . . . . . $6^1/_2$ ունցիա
ողողումը։

№ 4. Բենզիոնի թթուտ . . . . . 48 գրան։
Եֆկալիպտի թրմոց—евкалиптовая настойка. . . . . $^1/_2$ ունցիա։
Գինու ոգու սպիրտ—винный спиртъ. . $3^1/_2$ ունցիա։
Անանուխի իւղ—перечно-мятное масло . 12 կաթիլ։
Ողողումը 1 թէյի գդալ մի բաժակ ջրի հետ։
Բերանում պահել ոչ պակաս մի բոպէից.

№ 5. Կիտրոնաթթուի . . . . . 32 գրան։
Եփ տուած ջուր. . . . . 8 ունցիա։

№ 6. Բորական թթուտ—борная кислота. . 48 գրան։
Եփ տուած ջուր. . . . . $6^1/_2$ ունցիա։

№ 7. Վերմանգանական կալի—марганцево-кислый кали . . . . . 4 գրան։
Եփ տուած ջուր. . . . . 1 ունցիա։
Ողողումն 5—8 կաթիլ մի բաժակ ջրի մէջ։

Խոր համոզուած լինելով առաջարկած խորհուրդնե-
րիս օգտակարութեան մէջ, եթէ ի հարկէ դրանք բարե-
խղճաբար գործադրուին, ես՝ իբրև մարդ և իբրև
ատամնաբոյժ, ինձ բարոյապէս բաւական վարձատրուած
կը համարէի, եթէ ներկայ խորհուրդներովս կարողանայի
օգուտ տալ գէթ մի քանի տասնեակ անձանց, որոնք
ցանկանում են թէ իրանց սեպհական և թէ իրանց մեր-
ձաւորների բարիքը։